Կազմված է 2020 թ.
Բաղկացած է 12 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
2020 թվականի 05 04-ի

№ 994-Ա/2 հրամանով

Նախարար

Ա. Հարությունյան

«04» 05 2020 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից 20.06.2005 թ.
Գրանցման թիվ 290.210.03208
Վկայական 03Ա068257
ՀՎՀՀ 01837784
20.06.2005 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը
գրանցվել է Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

«26» 05 2020թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱԿԱԴՈՊԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)

Երևան 2020 թ.

12, 16.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **«Հակադոպինգային գործակալություն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հակադոպինգային կրթական, գիտական, դոպինգ ստուգման (թեստավորման), լաբորատոր փորձաքննությունների վերլուծության և հակադոպինգային կանոնները խախտած մարզիկների նկատմամբ պատժամիջոցների չափի որոշման ծրագրեր իրականացնող կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի ««Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 441-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1156 որոշմամբ՝ «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 290.210.03208) վերանվանելու միջոցով:

2. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

3. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման: Նրա գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

4. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

5. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած պետական կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

7. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ,

անհատականացման այլ միջոցներ, ինքնուրույն հաշվեկշիռ և հաշվարկային հաշիվ բանկերում:

10. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ **«Հակադոպինգային գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,**

հայերեն կրճատ՝ « **Հակադոպինգային գործակալություն**» ՊՈԱԿ,

ռուսերեն լրիվ՝ **«Антидопинговое агентство» государственная некомерческая организация,**

ռուսերեն կրճատ՝ **«Антидопинговое аагентство» ГНКО,**

անգլերեն լրիվ՝ **«Anti-Doping Agency» State non-commercial organization,**

անգլերեն կրճատ՝ **«ADA» SNCO**

11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան - 040, Աճառյան 2/6:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Կազմակերպության գործունեության նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության մարզիկների մրցումային և արտամրցումային դոպինգ ստուգումը, սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման դեմ ուղղված կանխարգելիչ քաղաքականության իրականացումը և հակադոպինգային կանոնակարգերի մշակումը՝ ըստ գործող համաշխարհային հակադոպինգային օրենսդրության:

13. Կազմակերպության գործունեության առարկան է՝ Հայաստանի Հանրապետությունում հակադոպինգային ծրագրերի մշակումը և իրականացումը:

14. Կազմակերպությունն իր գործունեությունը կազմակերպում է՝ իրականացնելով.

1) իր գործնական որոշումները կայացնելիս լինել անկախ պետական և հասարակական կազմակերպություններից (մարմիններից), ներառյալ առանց սահմանափակումների արգելելը սպորտի կամ հակադոպինգային ոլորտի համար պատասխանատու որևէ անձի որևէ ներգրավվածություն, այդ թվում ցանկացած միջազգային ֆեդերացիայի, ազգային ֆեդերացիայի, խոշոր մրցումների կազմկոմիտեի, Ազգային օլիմպիական կոմիտե, Պարալիմպիկ ազգային կոմիտե կամ կայացվող գործնական որոշումների վրա այլ պետական և հասարարական կազմակերպության ներկայացուցչի ազդելը,

2) իր բոլոր գործողությունների իրականացման ապահովում համաձայն «Համաշխարհային հակադոպինգային Օրենսգրքի» և միջազգային ստանդարտների,

3) ազգային առաջնությունների ժամանակ ինչպես նաև արտամրցումային ժամանակահատվածում ցանկացած մարզիկի (այդ թվում նաև որակազրկված

մարզիկների) դոպինգ ստուգման իրականացում, առանց մարզիկին կամ որևէ պետական և հասարակական մարմնի կամ այլ կազմակերպությանը նախապես տեղյակ պահելու,

4) սպորտում արգելված նյութերի և մեթոդների օգտագործման կանխարգելմանը ուղղված հակադոպինգային կրթական սեմինարների իրականացում՝ ըստ Միջազգային Կրթական Ստանդարտի պահանջների,

5) սպորտում արգելված և չարգելված նյութերի և մեթոդների օգտագործման վերաբերյալ ձեռնարկների մշակում և տպագրում մարզիկների և մարզիկներին օժանդակող անձնակազմի համար,

6) հակադոպինգային գործունեությունը կազմակերպելու նպատակով ՀՀ մարզիկների գտնվելու վայրի մասին տվյալների հավաքագրում,

7) ՀՀ մարզիկների թեստավորման պլանավորում և իրականացում իր լիազորությունների շրջանակներում՝ ըստ «Համաշխարհային հակադոպինգային Օրենսգրքի» և Համաշխարհային չափորոշիչների պահաջների,

8) Համաշխարհային հակադոպինգային գործակալության Հակադոպինգային կառավարման համակարգի (ADAMS) միջոցով ՀՀ մարզիկների դոպինգ ստուգման հետ կապված տվյալների գաղտնիության ապահովման գործընթացների ապահովում,

9) «Համաշխարհային հակադոպինգային Օրենսգրքի» և Համաշխարհային չափորոշիչների պահաջների համապատասխանության գործընթացների իրականացում,

10) Արտոնագրված հակադոպինգային լաբորատորիաներից ստացված արդյունքների և մարզիկների կենսաբանական անձնագրի տվյալների վերլուծության իրականացում,

11) բուժման նպատակով արգելված նյութերի և մեթոդների օգտագործման թույլտվություն տրամադրելու գործընթացի իրականացում,

12) հակադոպինգային կանոնակարգերի մշակում ըստ գործող «Համաշխարհային հակադոպինգային Օրենսգրքի» և դրանց կիրառումը ՀՀ տարածքում,

13) հակադոպինգային կանոնների խախտումների հետ կապված լսումների անցկացումը և պատժամիջոցների կիրառում,

14) հակադոպինգային կանոնների խախտման դեպքում ՀՀ մարզիկների և մարզիկներին աջակցող անձերի մրցումներին մասնակցելու իրավունքի և մարզական մասնագիտական գործունեությամբ զբաղվելու ժամանակավոր արգելում,

15) Համաշխարհային հակադոպինգային գործակալության (ՀՀԳ), Արտոնագրված հակադոպինգային լաբորատորիաների, Եվրոխորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի , Միջազգային թեստավորման գործակալության և դոպինգ ստուգման համար անհրաժեշտ սարքավորումների Արտոնագրված արտադրողների հետ մշտական կապի ապահովում

16) ՀՀԳ-ի, Եվրոխորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ացկացվող աուդիտների և մոնիտորինգային հարցշարերի իրականացմանը մասնակցություն

17) համագործակցում միջազգային և այլ ազգային Հակադոպինգային կազմակերպությունների և գործակալությունների հետ

18) հակադոպինգային կանոնների բոլոր հնարավոր խախտումների հետազոտում և հետաքննում՝ իր լիազորությունների շրջանակներում, ներառյալ հետաքննությունը, բոլոր արդյոք մարզիկների աջակցող անձնակազմը կամ այլ անձինք կարող են ներգրավված լինեն կանոնների խախտման յուրաքանչյուր դեպքում

19) հակադոպինգային ոլորտում գիտական հետազոտությունների նախաձեռնում և իրականացում:

15. Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, որոնց իրավասությունները՝ համապատասխանեցված «Համաշխարհային հակադոպինգային Օրենսգրքի» պահանջներին, համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հետ և հաստատվում տնօրենի կողմից:

16.Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) մարզիկների թեստավորում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարզիկների և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտերկրյա մարզիկների մրցումային և արտամրցումային թեստավորում.

2) միջազգային թեստավորման գործակալության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցող միջազգային մրցաշարերի ժամանակ միջազգային ֆեդերացիաների կամ մրցումների կազմկոմիտեի նախաձեռնությամբ՝ պայմանագրային հիմքերով մարզիկների թեստավորում.

3) գիտական կազմակերպությունների (արտերկրյա համալսարաններ) կամ Համաշխարհային հակադոպինգային գործակալության կամ ազգային ֆեդերացիաների պատվերով գիտական հետազոտությունների և հակադոպինգային կրթական ծրագրերի իրականացում՝ պայմանագրային հիմքերով:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

17. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը և գործադիր մարմինը:

18. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահված են Նախարարությանը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 441-Ն որոշման:

20. Նախարարությունն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

21. Նախարարությունը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

2) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

4) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

5) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

6) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանման նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

7) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը

8) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

22. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը, որին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ Նախարար):

23. Կազմակերպության տնօրենն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

24. Կազմակերպության տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն:

25. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

2) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսական միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

6) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

7) հաստատում է Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները,

8) նշանակում է Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր,

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, պահանջներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը,

11) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ,

26. Գործադիր մարմնի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

2) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

3) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարված կազմակերպության ղեկավար,

4) որը երբևէ խախտել է հակադոպինգային կանոնները:

27. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպության և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի լիազորությունների

դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

28. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, Նախարարի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

29. Կազմակերպության տնօրենն ընտրվում է մրցութային կարգով:

30. Մրցույթում հաղթող ճանաչված անձի հետ Նախարարը, հիմնադրի անունից, կնքում է պայմանագիր՝ առավելագույնը 5 տարի ժամկետով: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

31. Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում նրան նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

32. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է այդ մասին,

2) լրացել է նրա 65 տարին,

3) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում, կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,

5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի,

6) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ,

7) նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,

8) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը,

10) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

11) դատական կարգով նրա ղեկավարած պետական կազմակերպությունը ճանաչվել է սնանկ կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն,

12) Կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները իր մեղքով սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել,

13) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

33. Կազմակերպությունը ֆինանսավորվում է հիմնադրի կողմից, նրա սեփականությունը ձևավորվում է հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

34. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

35. Կազմակերպությունն է կրում իր սեփականության պահպանման հոգսը: Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

36. Հիմնադիրն իրավունք ունի անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով Կազմակերպությանն ամրագրել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

37. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

38. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել:

39. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

40. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:

41. Կազմակերպության գույքը ստեղծվում է հետևյալ աղբյուրների հաշվին՝

1) պետական գույք, որը հանձնվել է Կազմակերպությանն անհատույց,

2) պետական բյուջեից պետական պատվերի համար, ինչպես նաև այլ ձևերով հատկացված միջոցներ,

3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց նվիրատվություններից,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

43. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

44. Խոշոր են այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են կազմակերպության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվության կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 50%-ից ավելին: Խոշոր չեն այն գործարքները, որոնք կատարվում են առորյա գործունեության ընթացքում և համարվում են կազմակերպության կանոնադրական խնդիրներից ուղղակիորեն բխող գործառույթ:

45. Խոշոր գործարքը կատարվում է նախարարության համաձայնությամբ:

46. Սույն գլխի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր կազմակերպության հիմնադրի կամ Նախարարության հայցի հիման վրա:

VII. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

47. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, Նախարարությունը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

48. Կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) Նախարարության կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից:

49. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

50. Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմավորվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

51. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմավորվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

52. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է, առանց իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

53. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

54. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

55. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե: